ՄԱՐՏԻՐՈՍ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՐՅԱՆ

Մեռավ մեր ժամանակի ականավոր նկարիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, լենինյան և ՍՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր Մարտիրոս Սարյանը:

Պայծառ, անկրկնելի տաղանդի տեր արվեստագետը՝ Մարտիրոս Սերգեյի Սարյանը, պատկանում է մեր բազմազգ կերպարվեստի վարպետների փառաբանված համաստեղությանը, որոնք մեծապես կանխորոշեցին ամբողջ սովետական մշակույթի ընդհանուր զարգացումը: Մինչև իր երկար ու գեղեցիկ կյանքի վերջը նա հիացմունք էր պատճառում ստեղծագործական անթառամ չահելությամբ, մեր կյանքի ստեղծարար ուժերին իր սիրահարվածությամբ, աշխարհի իր լավատեսական խոր ընկալմամբ:

Մ. Ս. Սարյանը ծնվել է 1880 թվականի փետրվարի 28-ին, Դոնի Նախիջևանում: Ավելի քան 70 տարի է անցել այն օրից, երբ տասնյոթամյա պատանի Մ. Ս. Սարյանը ոտք դրեց Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի շեմին: Ընդմիշտ նրա սիրելի ուսուցիչը մնաց Վալենտին Սերովը: Սարյանի արվեստի ակունքները սկիզբ են առնում բազմադարյան արվեստ, բնության ինքնատիպ զգեցկություն ունեցող իր հարազատ Հայաստանից:

Մ. Ս. Սարյանը հսկայական խանդավառությամբ ողջունեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Հայաստանի ազատ կյանքը դարձավ գեղանկարչի ստեղծագործությունների գլխավոր թեման, որոնցում Սարյանը պատմում է ժողովրդի մարմնավորված հույսերի, նվաճված երջանկության մասին:

Վսեմ մարդկայնությամբ տոգորված նրա ստեղծագործության մեջ արվեստի նոր ուղիների համարձակ որոնումները օրգանապես կապված են գեղարվեստական լավագույն ավանդույթների հմուտ օգտագործման ու զարգացման հետ: Իրականության հետ սերտ կապը, արդիականության նոր հատկանշական երևույթները տեսնելու և հուզականությամբ արտացոլելու կարողությունը Մ. Ս. Սարյանի արվեստը՝ իր գաղափարա-գեղարվեստական ներգործությամբ առանձնապես մասշտաբային ու խոր դարձրին:

Մ. Ս. Սարյանի ստեղծած՝ կոմունիզմ կառուցող մեր ժամանակակիցների հիանալի պատկերաշարը, հարավային շռայլ բնության գույների ամբողջ հարստությամբ վրձնած բնանկարները ու նատյուրմորտները, թատերական դեկորացիաները, նրա գծանկարները ընդմիշտ մտել են սովետական կերպարվեստի գանձարանը: Սարյանի՝ ձևով խորապես ազգային ստեղծագործությունը միշտ էլ իր մեջ կրել է ինտերնացիոնալ, մարդկային վեհ բովանդակություն, արտահայտելով սոցիալիստական դարաշրջանի մարդկանց նվիրական խոհերն ու զգացմունքները:

Հայրենիքը բարձր է գնահատել Մ. Ս. Սարյանի վաստակը: Նա պարգևատրված է Լենինի երեք շքանշանով, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններով: Մ. Ս. Սարյանը երեք անգամ ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ:

Ծանր ու անդառնալի է կորուստը, որ կրեց մեր երկրի գեղարվեստական մշակույթը: Մ. Ս. Սարյանի՝ հայրենասեր նկարչի, արվեստը հավերժ կապրի: Նրա պայծառ, անմոռանալի կերպարը ընդմիշտ կմնա սովետական ժողովրդի հիշողության մեջ:

Լ. Ի. ԲՐԵԺՆԵՎ, Վ. Վ. ԳՐԻՇԻՆ, Ա. Պ. ԿԻՐԻԼԵՆԿՈ, Ա. Ն. ԿՈՍԻԳԻՆ, Ֆ. Դ. ԿՈՒԼԱԿՈՎ, Դ. Ա. ԿՈՒՆԱԵՎ, Կ. Տ. ՄԱԶՈՒՐՈՎ, Ա. Ն. ՇԵԼԵՊԻՆ, Պ. Ե. ՇԵԼԵՍՏ, Վ. Վ. ՇՉԵՐԲԻՑԿԻ, Ա. ՅԱ. ՊԵԼՇԵ, Ն. Վ. ՊՈԴԳՈՐՆԻ, Դ. Ս. ՊՈԼՅԱՆՍԿԻ, Մ. Ա. ՍՈՒՍԼՈՎ, Գ. Ի. ՎՈՐՈՆՈՎ, ՅՈՒ. Վ. ԱՆԴՐՈՊՈՎ, Պ. Ն. ԴԵՄԻՉԵՎ, Պ. Մ. ՄԱՇԵՐՈՎ, Վ. Պ. ՄԺԱՎԱՆԱՉԵ, Շ. Ռ. ՌԱՇԻԴՈՎ, Մ. Ս. ՍՈԼՈՄԵՆՑԵՎ, Դ. Ֆ. ՈՒՍՏԻՆՈՎ, Ի. Վ. ԿԱՊԻՏՈՆՈՎ, Կ. Ֆ. ԿԱՏՈՒՇԵՎ, Բ. Ն. ՊՈՆՈՄԱՐՅՈՎ, Գ. Ֆ. ՍԻՉՈՎ, Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆ, Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Բ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ե. Ա. ՖՈՒՐՑԵՎԱ, Վ. Ֆ. ՇԱՈՒՐՈ, Մ. Պ. ԳԵՈՐԳԱՉԵ, Ե. Մ. ՏՅԱԺԵԼՆԻԿՈՎ, Վ. Մ. ԱՃԵՄՅԱՆ, Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Մ. Կ. ԱՆԻԿՈՒՇԻՆ, Կ. Վ. ՎՈՐՈՆԿՈՎ, Ե. Վ. ՎՈՒՉԵՏԻՉ, Գ. Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ա. Մ. ԳՐԻՑԱՅ, Գ. Մ. ԴՅՈՒՐՋՅԱՆ, ՈՒ. Մ. ՋԱՓԱՐԻՉԵ, Տ. Է. ՋԱԼԿԱԼԻՍ, Վ. Ս. ԿԵՄԵՆՈՎ, Ե. Ա. ԿԻԲՐԻԿ, Գ. Մ. ԿՈՐԺԵՎ, Բ. Վ. ԻՈԳԱՆՍՈՆ, Պ. Ն. ԿՈՒԼՈՎ, Լ. Ա. ԿՈՒԼԻՋԱՆՈՎ, Մ. Վ. ԿՈՒՊՐԻՅԱՆՈՎ, Է. Մ. ՄԻՐԶՈՅԱՆ, Գ. Մ. ՍՈՒԼՈՎ, ՅՈՒ. Ի. ՊԻՄԻՆՈՎ, Ա. Ա. ՊԼԱՍՏՈՎ, Ն. Ա. ՊՈՆՈՄԱՐՅՈՎ, Ֆ. Պ. ՌԵՇԵՏՆԻԿՈՎ, Վ. Ֆ. ՌԻՆԴԻՆ, Տ. Տ. ՍԱԼԱԽՈՎ, Ս. Ս. ՍԱՖԱՐՅԱՆ, Ն. Ա. ՍՈԿՈԼՈՎ, Պ. Մ. ՍԻՍՈԵՎ, ՈՒ. ՏԱՆՍԻԿԲԱԵՎ, Ն. Վ. ՏՈՄՍԿԻ, Է. Ս. ԹՈՓՉՅԱՆ, Զ. Պ. ԹՈՒՄԱՆՈՎԱ, Կ. Ա. ՖԵԴԻՆ, Ռ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ա. Ի. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Տ. Ն. ԽՐԵՆՆԻԿՈՎ, Դ. Ա. ՇՄԱՐԻՆՈՎ, Ա. Ա. ՇՈՎԿՈՒՆԵՆԿՈ: